

«ԳԵՈԶՈՆ»

ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Տարածք՝ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ, Տ-10-55 /Հ-64/ (ՆՈՐԱՇԵՆ) –ՄՈՎՍԵՍ
ՄԱՐԶԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ԿՍ 7+600-ԿՍ 7+682
ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ՀՈՂԱՅԻՆ ՊԱՍՏԱՌԻ ԵՎ ԿԱՌՈՒՑՎՈՂ
ՀԵՆԱՊԱՏԻ ՈՒՂԵԳԻԾ

ԻՆԺԵՆԵՐԱԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ



Լիցենզիա ՔՊԼ-000308
Ներդիր ՔՊՆ-000308-11

Պատվիրատու՝ «ԷՂ ԱՐՏ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ

Տնօրեն՝

Ճարտարագետ-երկրաբան՝



Դ. Ասատրյան

Դ. Ասատրյան

Երևան – 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Լիցենզիա, ներդիր (նմուշի օրինակ)-----	3
Բացատրական մաս-----	6
Ներածություն-----	6
1. Ընդհանուր տեղեկություններ-----	8
2. Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը-----	10
3. Եզրակացություն-----	11
4. Օգտագործված գրականության ցանկ-----	12
5. Ուղեգծի լուսանկարներ-----	13



14869847

ድግረ-000308. 1-ክስ ጥላህ

Chlorophyll, Carotenoids, etc.

[illegible]

33 Մաքսիմի Տաթևի, Տ-10-55/7-64
(Զոհարշեն) - Մոկուեի Տաթևի
Էլեկտրոկայանի սեփականատեր-
ացրոյի 657+600-4574+682
հասցեալէն Էլեկտրոկայան
169, 44 ԲՍ. քաղաքի պաշտօնակէ
Կանայ տղ հետեցրոյ
նշեցի:

7 qnhs

2024-08-23, «ԳԵՈՂՈՆ» ՍՊԸ

Chrysomelids were common on the *Asplenium* spp. and *Polypodium* spp. in the forest.

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ԱՏՓՆՅԱԿ, ԲԱՇԽԱՐԱՅՈՒՄ Փ., 169, 44 ԲՆ. Իրազմիչի նշանակման և
համայնքի կազմակերպության
նշանակման

Գործողության ժամկետը՝ 23.08.2029թ.



UG556 3579 8DC9 3CE6

Մոտե փառաբանող տրված է ուղղաբանա էությունների նշանակումը: Փաստագրերի վավերականության ապացույցն ու էությունների բնույթի մասին փոփոխվող տեղեկությունները կը պահանջվեն <https://veris.e-gov.am> հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ապացույցի միանման համակարգի կայքում մի արտաքին ու հսկիչ բաներ կամ արձանագրություն առաջ արձագանքներ ծածկագրող (QR Code)



1 / 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԽՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-000308-11

«ԳԵՈԶՈՆ» ՍՊԸ

ԻՆՏԵՆՏԻՎԵՐԿՐԱՓԱՆԱԿԱՆ ՀԵՏԱՆՈՒԶՈՒՄ ՀՀ ՄԱՐԺՈՒՅԻ ՏԵՐԵԽԻ, S-10-55/R-41
(Զոմբաշեն) - Մոսկվա Տեղ-
կային նշանակության
ազդարձեցության 457 + 600
- 457 + 682 հապսաճի
վերաբարձրող հոսքին
սրբաբարձր և հարաբար
հնչաբարձր ուղեգիր

23.08.2024թ.

Գործողության ժամկետը՝

23.08.2029թ.

Ներդիրը վավերական է լիցենզիայի անկայության դեպքում
հնչաբարձր ուղեգիր



ՀԱՅԻՉ ՀԱՄԱՐ՝ UGFA 424I-155A-2C7E

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու
էլեկտրոնային բնութագրի ներկայումս դիտարկելը կատարվում է հետևյալ հղմով: <https://e-gov.am> Հանրայնության
պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միջավայրում համապատասխան համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ
համարը կամ սրբաբարձր արագ ստուգման կոդն հսկելով (QR Code)

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ

Ներածություն

1.«ԳԵՈՁՈՆ» ՍՊԸ-ի կողմից Ճարտարագետ-երկրաբանի կոորդինացմամբ և ղեկավարմամբ, համապատասխան ՀՀՇՆ-1-2,01-99-ի, ՀՀ Տավուշի մարզի, S-10-55 /Հ-64/ (Նորաշեն) – Մովսես մարզային նշանակության ավտոճանապարհի կմ 7+600 - կմ 7+682 հատվածի վերականգնվող հողային պաստառի և կառուցվող հենապատի ուղեգծի ինժեներաերկրաբանական կառուցվածքի, գրունտների կարգերի պարզաբանման նպատակով իրականացվել են Ճարտարագիտաերկրաբանական ուսումնասիրություններ:

2. Աշխատանքները իրականացվել են «ԳԵՈՁՈՆ» ՍՊԸ-ի կողմից «ԷՂ ԱՐՏ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի պատվերով: Աշխատանքների իրականացման նպատակն է, համաձայն Հայաստանի Հանրապետության նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի, ՀՀ Տավուշի մարզի, S-10-55 /Հ-64/ (Նորաշեն) – Մովսես մարզային նշանակության ավտոճանապարհի կմ 7+600 - կմ 7+682 հատվածի վերականգնվող հողային պաստառի և կառուցվող հենապատի ուղեգծի նախագծային փաստաթղթերի մշակման համար անհրաժեշտ երկրաբանական տվյալների հավաքագրումը և համապատասխան եզրակացության կազմումը: Վերը շարադրված խնդիրը լիարժեք լուծելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ճարտարագիտաերկրաբանական հետազննություններ.

1. Ուսումնասիրվել է տվյալ տարածքի երկրաբանական կառուցվածքը: Նշված և հարակից տարածքներին վերաբերվող տարբեր աղբյուրներում գետեղված, նախկինում կատարված ինժեներաերկրաբանական հետազոտումների տվյալների հավաքում, կանոնակարգում, համադրում և վերլուծություն:

2. Տեղադիտական հետազննություններով վերհանել վտանգավոր երկրաբանական երևույթները և պրոցեսները, եթե դրանք առկա են (սողանք, քարաթափում, ճահճացում և այլ):

3. Գոյություն ունեցող փոսորակների խրամուղիների և տեղանքում արխիվային նյութերի միջոցով պարզաբանել գրունտների շերտերը և դրանց հզորությունները, ինչպես նաև ստորգետնյա ջրերի առկայությունը:

4. Օգտագործել այս տարածքում նախկինում կատարված լաբորատոր նյութերը՝ կախված լիթոլոգիական կտրվածքների առանձնահատկություններից:

5. Նախկինում կատարված խախտված և բնական կառուցվածքի գրունտների փորձանմուշների լաբորատոր ուսումնասիրություններ, դրանց ֆիզիկամեխանիկական

բնութագրերի ամփոփում:


6. Դաշտային և ֆոնդային նյութերի կամերալ մշակում:

Վերը շարադրված աշխատանքների իրականացման արդյունքում կազմվել է տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանների մասին եզրակացություն:

Տեղանքը՝ ըստ ՀՀՇՆ-1-2,01-99-ի ինժեներաերկրաբանական պայմանների, I-ին կարգի տեղամաս է:

Ուսումնասիրվող տարածքի տեղադրումը կատարվել է 2025 թվականի հունիս ամսին: Ուսումնասիրվել են գոյություն ունեցող փոստրակները, խրամուղիները, հարակից տարածքների բնական կտրվածքները, ինչպես նաև օգտագործվել են ֆոնդային տվյալները: Տեղանքի մանրամասն ուսումնասիրության և գոյություն ունեցող բնական բացվածքների, տեղանքում առկա կտրվածքների հիման վրա տվյալ տարածքում գրունտները պարզ են դարձել:

Ուսումնասիրվող տեղանքի կոսմոֆոտո



1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխարհագրական տեսակետից տարածքը տեղադրված է ՀՀ Տավուշի մարզում:

Գեոմորֆոլոգիական ուսումնասիրվող տարածքը ընկած է Միափորի լեռնաշղթայի հարավ արևելյան լեռնալանջի ստորոտում:

Ռելիեֆի բացարձակ նիշերը տեղամասում տատանվում են 754.0-1224.0 մետրերի սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքում ուսումնասիրվող տարածքի կտրվածքներում մասնակցում է միջին յուրայի (J₂) հասակի հրաբխանստվածքային շերտերը՝ Պորֆիրիտներ տուֆաբեկչաներ, որոնք մակերեսում խիստ հողմնահարված են: Հողմնահարված գրունտներն են՝ ավազակավերը:

Կլիման ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և քանի որ ուսումնասիրվող տարածքը գտնվում է Տավուշի մարզում, ուստի բերում ենք նրա համապատասխան կլիմայական ցուցանիշները: Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և չոր ամառը՝ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը 25°C է, միջին տարեկան հարաբերական խոնավությունը 60% (ժ.15-ին), լեռնահովտային քամիները 2-3 մ/վրկ արագությամբ և ցուրտ անհողմային ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը -3,7°C է, թույլ քամիները 2-3մ/վրկ արագությամբ:

Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Բերդի օդերևութաբանական կայանի դիտարկումների:

Օդի ջերմաստիճանը, °C

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Բերդ	717	0.5	0.9	4.5	10.5	15.6	19.1	22.3	21.4	17.4	11.6	6.8	2.7	11.1	-17	38

Օդի հարաբերական խոնավությունը (%)

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը. %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII I	IX	X	XI	XII		ամենա- ցուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
Բերդ	71	72	75	74	76	71	67	69	73	77	75	73	73	67	54

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը


Բնակավայրի անվանումը	<u>Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը</u>												Չյան ծածկույթը			
	Ըստ ամիսների												տարեկան	տասնօրյա առավելագույնը, սմ	օրերի թիվը	ջրի առավելագույն քանակը ձյան մեջ, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Բերդ	<u>21</u> 15	<u>27</u> 20	<u>41</u> 29	<u>51</u> 30	<u>71</u> 45	<u>67</u> 63	<u>42</u> 48	<u>30</u> 46	<u>35</u> 85	<u>42</u> 36	<u>28</u> 27	<u>17</u> 16	<u>472</u> 85	34	50	56

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ 22-01-2024 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,6 մետր:

Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 23մ/վ է, 50 տարվա ընթացքում 27մ/վ:

Չյան նորմատիվային կշիռը՝ 50կգ/մ² է:

Քամու արագության նորմատիվային ճնշումը՝ 55կգ/մ² է:



Նկ 2. Կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզ

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրեր չեն բացահայտվել:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում շինարարության համար՝ բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20-04.2020թ.-ի, տեղազնվող շրջանը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.3g$ արագացմամբ:

2. Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը

Համաձայն կատարված ուսումնասիրությունների՝ առկա բնական կտրվածքների, նախկինում հորատման և արխիվային նյութերի տվյալների (նախկինում լաբորատոր ուսումնասիրման հիման վրա), ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են՝ **խճավազներ, խիճ, ավազներ**:

Տեղամասի ինժեներաերկրաբանական կտրվածքին մասնակցում են 2 հիմնական գրունտների շերտեր վերնից-ներքև.

Շերտ1- Խճավազներ, խիճ, կավավազային լցիչով, (ասֆալտ, ասֆալտի ենթաշերտ):

Շերտ2- Խճավազներ, ավազներ՝ ավազակավի, կավավազի լցիչով:

Ուսումնասիրվող ուղեգծի համար գրունտները տրվում են մինչև 3.0 մ խորությամբ (տես ստորև):

ՀՀ Տավուշի մարզի, S-10-55 /Հ-64/ (Նորաշեն) – Մովսես մարզային նշանակության ավտոճանապարհի կմ 7+600 - կմ 7+682 հատվածի վերականգնվող հողային պաստառի և կառուցվող հենապատի ուղեգծի գրունտները հետևյալն են՝

Շերտ1 0.0-0.2մ Խճավազներ, խիճ, կավավազային լցիչով,
(ասֆալտ, ասֆալտի ենթաշերտ):
Ծավալային կշիռը՝ 1.9տ/մ³
Հաշվարկային ճնշումը՝ 300կՊա:
Գրունտը ըստ շահագործման դժվարության
համաձայն ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի 12.IVp կարգ է:



Շերտ2 0.2-3.0մ Խճավազներ, ավազներ՝ ավազակավի, կավավազի լցիչով:
Գրունտները տեղանքում հետազննման հիման վրա,
դրանք արմատական խճավազային են տեղ-տեղ հողմահարված:
Ծավալային կշիռը՝ համապատասխան կարգերի 2,0-2,2տ/մ³
Հաշվարկային ճնշումը՝ համապատասխան կարգերի 350-500 կՊա:
Գրունտը ըստ շահագործման դժվարության համաձայն
ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ. 101-ի 50% 12. IV, 50% 5.5) V կարգ են:

3.ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Կատարված հետազոտությունների և դրանց արդյունքների վերլուծությունը բերել են հետևյալ եզրակացության.

Հետազոտվող տարածքը գտնվում է ՀՀ Տավուշի մարզում: Ռելիեֆի բացարձակ նիշերը տեղամասում տատանվում են 754.0-1224.0 մետրերի սահմաններում:

Տեղամասի երկրաբանական կտրվածքը՝ հետազոտված խորությունների սահմաններում, ներկայացված է գրունտների 2 շերտով:

- Ուսումնասիրվող տեղամասում գրունտները կարող են ծառայել, որպես հիմնատակ:
- Համաձայն ՀՀՇՆ 20-04.2020թ.-ի, «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max}=0.3g$ արագացմամբ:
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը՝ համաձայն ՀՀՇՆ 22-01-2024 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,6 մետր:

Գրունտային ջրերը բացակայում են:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, փյուզումը քարաթափությունը՝ բացակայում են:

- Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Ճարտարագետ-էրկրաբան՝



Դ. Ասատրյան

4. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ГОСТ 25100-2020. Грунты. Классификация.
2. ՀՀՇՆ IV 10.01.01-2006 “ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀԻՄՆԱՏԱԿԵՐ”
3. ՀՀՇՆ 32-01-2022-ի աղյուսակ-101 «**Բնահողերի և ապարների դասակարգում**»
4. ՀՀՇՆ 20-04.2020թ.-Երկրաշարժադիմացկուն շինարարություն
5. ՀՀՇՆ 1 – 2.01-99 «Ինժեներական հետազոտություններ շինարարության համար:
«Հիմնական դրույթներ»
6. ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն»
7. Геология АрмССР том 1 Геоморфология 1961г.

**5. ՀՀ Տավուշի մարզի, S-10-55 /Հ-64/ (Նորաշեն) – Մովսես մարզային նշանակության
ավտոճանապարհի կմ 7+600 - կմ 7+682 հատվածի վերականգնվող հողային պաստառի և
կառուցվող հենապատի ուղեգծի լուսանկարներ.**



